# Եղիշե Չարենց

## Կապույտը

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,
Կապույտը թախիծ.
Կապույտը կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ:

Կապույտը քրոջ աչքերի անհուն
Առավոտն է թաց:

Կապույտում հոգիս մի հին իրիկուն
Անզո՛ր հեծկլտաց:

Կապույտը ծեգին աղոթքի կանչող
Ղողանջն է զանգի:
Կապույտը արցունք, ու կապույտը ցող
Հոգու, երկնքի:

Կապույտում անսուտ խոսքեր են հոսում
Երկնքից երկինք:
Հոգիս Կապույտի լաբիրինթոսում
Սրբացած կնիք:

Այն, որ չի եղել, որ պե՛տք է լինի
Մանկական սրտում

Հոսում է, որպես լուսավոր գինի
Հոգու կապույտում: